Վասպուրականի իշխանաց իշխաններին (իմա՛ թագաւորներին) ուղարկուող նամակներից յետոյ կայսրը նշում է երկրի կիսանկախ իշխանութիւններին (ընդամենը՝ 8 կամ 10 «արխոնտի») առանձին ուղարկուող նամակների մասին եւ Կոգովիտից, Տարօնից, Մոկսից, Անձեւացիքից, Սիւնիքից (Συνῆς) ու Վայոց ձորից (Βαϊτζώρ) յետոյ տալիս վերջին 2 անունները. «Խաչէնի *(Χατζιένης) իշխանին՝ Հայաստան,* Սեւորդեաց, *այսինքն Սեւ որդիներ կոչուող (τῶν Σερβοτιῶν, τῶν λεγομένων Μαύρα παιδία)* երեք *իշխաններին»*[24]:

Ժ. դ. երկրորդ կէսի արաբ մատենագիր Իբն Հաուքալի մօտ պահպանուել է 955 թ. դէյլեմցի Մարզուբան Սալարեանի կողմից Հայաստանի ու հարեւան երկրների պետական կազմաւորումներից գանձուող հարկերի ցանկը: Նրանում Շարւանի, Շաքքիի, Ահր-Վարզականի, Ներքին Արմինիայի (Անի), Վասպուրականի (Ալ-Դայրանի), Վայոց ձորի (Ալ-Վայզուր) կողքին յիշատակւում են նաեւ Հայոց Արեւելից կողմանց երեք ապագայ թագաւորութիւնների տիրակալները. «Ռուբի տէր» (մեր կարծիքով՝ անկասկած, Սեւորդիք-Փառիսոսի՝ *անճանաչելիօրէն աղճատուած յիշատակումն է) Սանհարիբ Իբն Սաւադան (Սեւադա Իշխանանունի որդի Յովհաննէս Սենեքերիմը)՝ 300 հազար դիրհեմ հարկով, «Ջուրզի տէր» (անկասկած՝* Գորոզուի *աղճատուած յիշատակումն է) Վաշական Իբն Մուսան՝ 200 հազար դիրհեմով եւ 150 հազար դիրհեմով՝* «Խաջինի *տէր» Սանհարիբը*[25], *այսինքն՝* Խաչէնի *Սենեքերիմ իշխանը, որին յիշատակում էր նաեւ Անանիա Մոկացին*[26]: *Արաբ մատենագիրը նրանց դեռ թագաւոր չի կոչում, թէպէտ ուշագրաւ է, որ նա այդպէս է վարւում նաեւ Անիի, Վասպուրականի եւ Շաքիի դէպքերում, ուր թագաւորական իշխանութեան գոյութիւնը որեւէ կասկած չի յարուցում:*

Փառիսոսի թագաւորութեան ստեղծման (Սեւադա Իշխանանունի որդու՝ Յովհաննէս Սենեքերիմի թագադրման) մասին պահպանուել է Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ի նախավերջին գլխի մանրամասն հաղորդումը[27]: *Այն թոյլ է տալիս այդ թագադրումը թուագրել երկի շարադրմանը նախորդած ժամանակով (մինչեւ 982 թ.), իսկ ըստ Ն. Ադոնցի հաշուարկների՝ դա աւելի հաւանական է վերագրել 966-978 թթ. ժամանակամիջոցին*[28]: *Փառիսոսի յաջորդ թագաւորների՝*

24 **Կոստանդին Ծիրանածին**, *Բիզանդական արքունիքի արարողութիւնների մասին.* Գիրք II, թարգմանութիւնը բնագրից, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները **Հ. Բարթիկեանի** (*Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, 6. *Բիզանդական աղբիւրներ*, Բ), Եր., 1970, էջ 151: Հմմտ. **E. Honigmann**, *Die Ostgrenze des byzantinischen Reiches*, Bruxelles, 1961, էջ 147-148. **К. Н. Юзбашян,** *Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, Москва, 1988, էջ 87: Տեղին նշենք, որ, իբրեւ վարկած, հնարաւոր է մտածել, թէ հեղինակի կամ նրա մի ընդօրինակողի մօտ ինչ-որ շփոթութիւն է սպրդել, իսկ իրականում *Սեւ որդիներ՝ Սեւորդիք* են կոչուել կայսեր «Հայաստանեան թղթակիցներից» ոչ թէ վերջին *երեք* իշխանութիւնները, այլ այդ՝ իրօք երեքից առաւելագոյնը երկուսը, այն է՝ Թ.-Ժ. դդ. առաջին կէսում հայկական աղբիւրներից շատ լաւ յայտնի *Տաւուշ-Ջորագետը* (իրօք՝ *Սեւորդեաց* կամ նաեւ *Ուտեաց գաւառ* կոչուած) եւ *Գարդման-Փառիսոսը* (ընդ որում, վերջինս իր Սահակ Սեւադայ իշխանի ջանքերով տիրեց Սեւորդիքին, սակայն ի վերջոյ այն մնաւ Լոռու Կիւրիկեանների տիրոյթների մէջ): Այս վարկածի ընդունման դէպքում «երրորդ թղթակցի» տակ հնարաւոր կը լինէր ենթադրել, անշուշտ, *Դիզակ-Գորոզուի* իշխանին:

25 **V. Minorsky**, *Caucasica IV: II. The Caucasian Vassals of Marzubān*, - BSOAS, 1953, XV/3, էջ 519. **Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան**, *Հայաստանի բնահարկը արաբական ժամանակաշրջանում*,- ԼՀԳ, 1969, թիւ 2, էջ 58-59:

26 **Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի** *Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից*, էջ 144: Տե՛ս վերեւում, ծնթ. 21:

27 *ՊԱ*, գիրք Գ, ԻԲ, էջ 341: Հմմտ. **А. А. Акопян,** *Албания-Алуанк*, էջ 213-214:

28 **Ն. Ադոնց**, *Պատմական ուսումնասիրութիւններ*, էջ 138-140: